26 նոյեմբերի 2015 թվականի N 1397 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 4-Ի N 614-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ստանդարտացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունիսի 4-ի «Ստանդարտների մշակման ծառայությունների 2015 թվականի ծրագիրը և ստանդարտացման 2015 թվականի աշխատանքների ցանկը հաստատելու մասին» N 614-Ա որոշման N 2 հավելվածի ցանկում կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումները՝

1) 1.50-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

1.50.	Օրգանական սննդամթերքի արտադրման, մշակման, պիտակավորման և մակնշման ուղեցույց Ազգային ստանդարտի մշակում՝ Կոդեքս Ալիմենտարիուսի CAC/GL 32-1999 ստանդարտին ներդաշնակ	Օրգանական սննդամթերքի արտադրման, պիտակավորման և մակնշման գործընթացի կարգավորում՝ շուկայում մեքենայություններից պաշտպանելու համար	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ (համաձայնությամբ)	ստանդարտ	2015 թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե և ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ

».

2) 1.54-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1.55-րդ և 1.56-րդ կետերով.

«

1.55.	Բաստուրմա և սուջուխ. Տեխնիկական պայմաններ Ազգային ստանդարտի մշակում	պահանջների սահմանում	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ (համաձայնությամբ)	ստանդարտ	2015 թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե և ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ
1.56.	Ձրի որակ. Բրոմիդների, քլորիդների, նիտրատների, ֆոսֆատների հետազոտությունը հեղուկային իոնափոխանակման քրոմատոգրաֆիկ մեթոդով Ազգային ստանդարտի մշակում՝ ԻՍՕ 10304-1:2007 ստանդարտին ներդաշնակ	Փորձարկման մեթոդի արդիականացում միջազգային պահանջներին ներդաշնակ	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ (համաձայնությամբ)	ստանդարտ	2015 թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե և ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ